11.03.2022թ.
349-74

ՀՀ Վարչապետ աշխատակազմի
ղեկավար Արայիկ Հարությունյանին

Տեղեկություն ստանալու հարցում

Հարգելի պարոն Հարությունյան,

Սույն թվականի փետրվարի 23-ին Ինֆորմացիայի ազատության կենտրոնը տեղեկությունն ստանալու հարցում էր ուղարկել Վարչապետի աշխատակազմ՝ խնդրելով տրամադրել տեղեկություն այն մասին, թե քանի զանգվածային լրատվության միջոց և/կամ լրագրողական հասարակական կազմակերպություն է ստացել ֆինանսական աջակցություն ՀՀ պետական բյուջեից 2019-2021 թթ. ընթացքում:

Սույն թվականի մարտի 9-ին ԻԱԿ-ը Ֆինանսների նախարարությունից ստանում է պատասխան գրություն, որտեղ ներկայացված է Պետական եկամուտների նախարարությանը վերահասցեագրված հարցման պաշտոնական պատասխանը: Ցավոք պատասխանում ներկայացված չեն պահանջվող հարցերի պատասխանները: Ավելին, պատասխանից պարզ է դառնում, որ ՊԵԿ-ը սխալ է ընկալել հարցման մեջ ներկայացված պահանջը, քանի որ պատասխան գրությունը վերաբերում է ոչ թե պետության կողմից ԶԼՄ-ներին տրամադրված դրամաշնորհներին/սուբսիդիաներին, այլ վերջիններիս հարկերին(գրությունը՝ կից):

Ենթադրվում էր, որ ԻԱԿ-ի կողմից պահանջվող տեղեկությունների տրամադրումը մեծ դժվարություն չպետք է ներկայացներ, հատկապես, որ դեռևս 10 տարի առաջ նույնաբովանդակ հարցումով ԻԱԿ-ը դիմել է Կառավարություն և լիարժեք պատասխան ստացել օրենքով սահմանված ժամկետում:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ԻԱԿ-ի հարցերը այդպես էլ պատասխան չեն ստացել՝ ստիպված ենք նորից դիմել նույն հարցադրումներով: Համաձայն ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի՝ խնդրում ենք լրացնել պատասխանն ու տրամադրել հետևյալ տեղեկությունները.

1. Քանի՞ զանգվածային լրատվության միջոց և/կամ լրագրողական հասարակական կազմակերպություն է ստացել ֆինանսական աջակցություն ՀՀ պետական բյուջեից 2019-2021 թթ. ընթացքում:
2. Խնդրում ենք տվյալները տրամադրել ըստ տարիների՝ նշելով կազմակերպության անվանումը, հատկացված գումարի չափը և հատկացման ժամանակացույցը:

Խնդրում ենք տեղեկություն ստանալու հարցմանը պատասխանել «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 9-րդ հոդվածով սահմանված կարգով և ժամկետներում:

Ինֆորմացիայի ազատության կենտրոն (ԻԱԿ)
ՀՀ, ք. Երևան, Բուզանդի փող. 1/3, 4-րդ հարկ, Հեռ +37491407836, Էլ. հասցե՝ foi@foi.am Կայք՝ www.foi.am

Ուշադրություն։ Խնդրում ենք հարցմանը պատասխանել բացառապես ***էլեկտրոնային եղանակով։***

Հարգանքով՝
ԻԱԿ նախագահ Շուշան Դոյդոյան